ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
Երկրաբանություն և աշխարհագրություն 55(3), 2021 *Геология и география*

Աշխարհագրություն

УДК 338.22.01

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գ. Գ. ՂԱՄԲԱՐՅԱՆ *

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Ազգային տնտեսությունների զարգացման հաջողությունները կամ ձախողումներն էապես կախված են տնտեսական քաղաքականության արդյունավետությունից: Աշխարհի երկրների մեծամասնությունը գրանցում է տնտեսական զարգացման անհաջողություններ, կամ լավագույն դեպքում զարգացման ցածր տեմպեր: Նման դրվածքի պայմաններում անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել՝ ինչո՞ւմ են տնտեսական քաղաքականության արդյունավետության ձախողման պատճառները, որո՞նք են արդյունավետության վրա ազդող գործոնները: Հոդվածում տարբերակվում ու մանրամասնվում են տնտեսական քաղաքականության ձևավորման, իրականացման և այլ ենթահամակարգերի հետ համագործակցության (սիներգիայի) գործընթացներում նրանց արդունավետության վրա ազդող գործոնները, ինչպես նաև, հիմնախնդիրները: Ըստ մեր դիտարկումների՝ տնտեսական քաղաքականության ձևավորման արդյունավետության վրա վրա ազդող գործոններն են՝

– տեսական հիմնավորման փուլում՝ տնտեսական համակարգի բարդությունը, տնտեսական լուծումների բազմակիությունը, մոտեցումների իրարամերժությունը;

– ինստիտուցիոնալ համաձայեցման փուլում՝ արտաքին աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերը, ներքին քաղաքական շահերը, նպատակային հիպոթեզները:

Թերգիտելիքների, կա՛մ արտաքին ու ներքին շահագրգիռ ուժերի կողմից իրականացվող ճնշումների, տնտեսական քաղաքականության տեսական հիմնավորումները կարող են չհամապատասխանել տվյալ երկրի տնտեսական զարգացման առաջնահերթություններին, լինել ոչ արդյունավետ: Եթե նույնիսկ տնտեսական քաղաքականության տեսական հիմնավորումները, լինեն գիտականորեն անթերի հիմնավորված, միևնույնն է, դրանք կյանքի են կոչվում քաղաքական ինստիտուտների կողմից և վերաձևակերպվում ի շահ քաղաքական արդյունավետության: Եվ եթե քաղաքական ինստիտուտները էքստրակտիվ են, էլիտայի շահերը պաշտպանող, ապա տնտեսական արդյունավետությունը զոհաբերվում է մասնավոր հետաքրքրություններին:

Տնտեսական քաղաքականության իրականացման արդյունավետության վրա ազդող գործոններն են՝ սեփականության իրավունքի պաշտպանվածությունը, դատական համակարգի անաչառությունը, կոռուպցիայի, բյուրոկրատիայի և հանցագործության բացակայությունը, քաղաքական կայունությունն և վստահելիությունը: Առանց գործարար միջավայրի բարելավման տնտեսական քաղաքականութունը կամ արդյունավետ չէ, կամ էլ ընդհանրապես չի գործում: Տնտեսական քաղաքականության համակարգային

* E-mail: ghambaryan.gg@mail.ru

գործակցության (սիներգիայի) արդյունավետության վրա ազդող գործոններն են՝ վերջինիս հետ սերտորեն առնչվող ենթահամակարգերի՝ մասնավորապես ենթակառուցվածքների, կրթության, գիտության զարգացումը և միմյանց հետ փոխհամագործակցությունը: Էապես կարևոր է ենթահամակարգերի միմյանց հետ փոխհամագործակցությունը: Տնտեսական քաղաքականության արդյունավետության հիմնախնդիրների պատճառների, ազդող գործոնների ուսումնասիրությունն ու պարզաբանումը մեզ հնարավորություն է տալիս իրավիճակային լուծումներից անցում կատարել ռազմավարական լուծումների, հետևանքային լուծումներից՝ պատճառային լուծումների և դրանով իսկ ապահովել տնտեսական զարգացման երկարաժամկետ կայուն արդյունավետություն:

https://doi.org/10.46991/PYSU:C/2021.55.3.199

***Keywords*:** economic policy, efficiency of economic policy, economic development, efficiency problem.

Խնդրի դրվածքը: Տնտեսական քաղաքականության արդյունավետության հիմնախնդիրը յուրաքանչյուր պետության մշտապես օրակարգային, առաջնային կարևորության հիմնախնդիրներից է, որի լուծումներից, առաջնահերթություններից, սկզբունքային մոտեցումներից և ռազմավարական երկարաժամկետ ծրագրերից կախված է երկրի տնտեսական կայուն զարգացումն ու բնակչության բարեկեցությունը: Անհերքելի փաստ է, որ տնտեսական քաղաքականության արդյունավետությամբ են պայմանավորված թե՛ կործանարար ճգնաժամերը և թե՛ տնտեսական հրաշքները:

Ներկա իրականության մեջ՝ կորոնավիրուսի համավարակի հետևանքով համընդհանուր տնտեսական ճգնաժամերի, ինչպես նաև աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական գլոբալ փոփոխությունների, տնտեսական, քաղաքական, ռազմական ուժերի, ազդեցության տարածքների ու ոլորտների վերաբաշխման այս ժամանակաշրջանում, տնտեսական քաղաքականության բարեփոխման խնդրի առջև կանգնել են աշխարհի երկրների մեծամասնությունը: Սակայն տնտեսական քաղաքականության բարեփոխման և արդյունավետության հիմնախնդիրն առավել կենսական կարևորություն ունի Հայաստանի հանրապետության համար: Գտնվելով գերտերությունների աշարհաքաղաքական շահերի ու տարածքային հավակնությունների թեժ կիզակետում, ապրելով համավարակի և քառասունչորսօրյա դաժան պատերազմի հետևանքները, ՀՀ պետք է առավել մեծ պատասխանատվությամբ և ազգային շահերի գիտակցությամբ մոտենա տնտեսական քաղաքականության արդյունավետության հիմնախնդրին:

Այս համատեքստում օրակարգային կարևորություն է ձեռք բերել տնտեսական քաղաքականության արդյունավետության հիմնախնդիրների, ձախողման պատճառների ու գործոնների ուսումնասիրությունը, որի քննարկմանն ու պարզաբանմանն էլ նվիրված է հոդվածը:

Հետազոտության մեթոդիկան: Տնտեսական քաղաքականության առաքելությունը տնտեսական գործընթացների կարգավորումն է ու տնտեսական զարգացման արդյունավետության բարձրացումը: Տնտեսական քաղաքականության դերը և կիրառական նշանակությունը կարևորվել է հատկապես 1929–1930 թթ. տնտեսական ճգնաժամից հետո և դարձել յուրաքանչյուր պետության տնտեսական գործընթացների կարգավորման ակտիվ միջոց: Տարբերում են տնտեսական համակարգի վրա պետության

տնտեսական քաղաքականության ազդեցության երկու մոտեցում՝ լիբերալ, երբ ապահովվում է շուկայական մեխանիզմների գործարկման արդյունավետությունը և ակտիվ, երբ գործնական ակնառու միջամտությամբ կարգավորվում են տնտեսական համակարգի խիստ կարևոր գործառույթները:

Պատմությանը հայտնի են տնտեսական քաղաքականության բազմաթիվ մոդելներ: 1990–2000-ական թթ. լայնորեն կիրառելի էր «Վաշինգտոնյան կոնսենսուս»-ի լիբերալ մոդելը: Այն համարվում էր «ունիվերսալ» մոդել և առաջարկվում էր բոլոր զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին՝ առանց որակական բնութագրերի և առանձնահատկությունների տարբերակման ու գնահատման: Իրականում, այս տարբերությունների և արտաքին և ներքին բազմաթիվ այլ գործոնների ազդեցությամբ «ունիվերսալ» համարվող այս մոդելը տարբեր տարածաշրջաններում դրսևորվել է ինքնատիպ փոխակերպումներով. Արևելյան Եվրոպայում՝ «կոնսենսիուսը հանուն ռեֆորմների», ԱՊՀ երկրներում՝ «էլիտայի դավադրություն», Լատինական Ամերիկայի երկրներում՝ «կոռումպացված կապիտալիզմ» տարբերակներով [1]: Մոդելի գործնական կիրառությունը հաջողություն է ունեցել միայն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, մնացած լայն աշխարհագրություն ընդգրկող, այդ թվում և ԱՊՀ երկրներում կամ մինչև վերջ չի իրականացվել, կամ ձախողվել է:

«Վաշինգտոնյան կոնսենսուս»-ին այլընտրանքային ու բավականին ազդեցիկ մոդել է տնտեսական զարգացման «Ասիական» ակտիվ մոդելը, որն, ըստ էության, պետության և բիզնեսի ինքնատիպ միություն է: Գրականության մեջ հայտնի է «ընկերական կապիտալիզմ» [1] անունով: Տարածված է Արևելյան և Հարավարևելյան Ասիայի երկրներում: Հաջողված մոդել է: Ապահովել ու ապահովում է տնտեսական աճի արագընթաց տեմպեր:

Պատմությանը հայտնի են տնտեսական քաղաքականության մի շարք այլ մոդելներն ևս, ինչպիսիք են պետության ակտիվ մասնակցությամբ ավտորիտար մոդելներն՝ օրինակ «Չինական» (1980-ական թթ.), «ԽՍՀՄ» (մինչև 1980-ական թթ. վերջ), կամ պետական դիրիժիզմի մոդելներն՝ օրինակ «Շվեդական» (1950–1980-ական թթ.): Հիշատակության արժանի են նաև «Տնտեսական մարգինալիզացման» մոդելն՝ Արևադարձային Աֆրիկայի երկրներում (1960–2000-ական թթ.), «Պոպուլիզմի» մոդելը՝ Լատինական Ամերիկայի երկրներում (1960–1970-ական թթ.) և այլն:

Այս մոդելներից ոմանք հաջողված են և նպաստել են տնտեսական զարգացմանը, մյուսներն, ընդհակառակը, ձախողված են և պատճառ են հանդիսացել տնտեսական լճացմանը: Կամ միևնույն մոդելն ինչ-որ փուլում հաջողություններ է արձանագրել, մեկ այլ փուլում՝ սնանկացում: Ըստ էության ՀՀ տնտեսական ճգնաժամը պատմական բացառություն չէ, բայց և չունի արդարացում. չէ որ տնտեսական զարգացման մեխանիզմների, սկզբունքների, օրենքների մասին գիտական հանրությանը հայտնի է թերևս բավականին: Քիչ չեն նաև տնտեսական քաղաքականության պատմական փորձի՝ հաջողությունների ու անհաջողությունների ընդհանրացումներն ու եզրահանգումները: Ինչո՞ւ կրկնել պատմական հայտնի սխալներն ու սովորել սեփական սխալների վրա: Հայաստանի համար վերջին իրադարձությունների արդյունքում, նման սխալները սպառնում են ոչ միայն երկրի բարեկեցությանը, այլ պարզապես

գոյությանը: Այսպիսով, տնտեսական արդյունավետ քաղաքականությունը ՀՀ օրակարգային ու ռազմավարական խնդիր է:

Տնտեսական քաղաքականության արդյունավետությունը կախված է ինչպես բուն տնտեսական քաղաքականության (որպես համընդհանուր համակարգի ինքնուրույն ենթահամակարգ) արդյունավետությունից, այնպես էլ տնտեսական քաղաքականության (որպես համընդհանուր միասնական համակարգի բաղկացուցիչ մաս) և իր զարգացմանը նպաստող այլ ենթահամակարգերի համակարգային գործակցության արդյունավետությունից: Վերջին հանգամանքը շատ դեպքերում անտեսվում կամ ուշադրության չի արժանանում հետազոտություններում: Սովորաբար դիտարկվում են միայն տնտեսական քաղաքականության արդյունավետության խնդիրները: Սակայն առանց համակարգային ընդհանուր արդյունավետության, տնտեսական քաղաքականության արդյունավետությունն առ ոչինչ է, կամ իր հնարավորության ներուժից պակաս արդյունավետ:

Տնտեսական քաղաքականության արդյունավետության հիմնախնդիրներ: Հիմնանդիրների բացահայտման և պարզաբանման համար նախ և առաջ կարևոր է տնտեսական քաղաքականության ձևավորման ընթացակարգի հստակեցումը: Վերջինիս իմացությունը հնարավորություն է ընձեռնում ամրագրել ձևավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի նպատակները, խնդիրները, լուծման ուղիները և դրանց տնտեսական արդյունավետության վրա ազդող գործոնները:

Ըստ Աֆոնցևի՝ տնտեսական քաղաքականության ձևավորման ընթացակարգն ընթանում է հետևալ փուլերով [1].

• առաջին փուլում հստակեցվում են տնտեսական քաղաքականության միջոցառումների միջոցով լուծման անհրաժեշտություն ունեցող հիմնախնդիրները;

• երկրորդ փուլում, հիմք ընդունելով տնտեսական վերլուծության փաստացի գործիքակազմը և էմպիրիկ հետազոտության արդյունքները, մշակվում են հիմնախնդիրների լուծման տնտեսական քաղաքականության հնարավոր տարբերակները, ապա հաշվարկվում այդ տարբերակներից յուրաքանչյուրի իրականացման տնտեսական կորուստներն ու օգուտները;

• երրորդ փուլում իրականացվում է հիմնախնդիրների լուծման քաղաքական հետաքրքրությունների և երկրորդ փուլում մշակված տնտեսական քաղաքականության տարբերակների կյանքի կոչման քաղաքական մեխանիզմների վերլուծություն;

• չորրորդ փուլում իրականացվում է տնտեսական քաղաքականության տարբերակների կյանքի կոչման քաղաքական հնարավորությունների գնահատում, ապա ընտրվում քաղաքական ընդունելի տարբերակներից առավել արդյունավետը և մշակվում դրա իրականացման «ճանապարհային քարտեզը»:

Վերոշարադրյալ ընթացակարգից երևում է, որ առաջին երկու փուլերում կատարվում է տնտեսական քաղաքականության տեսական հիմնավորում և մշակում, իսկ վերջին երկու փուլերում՝ քաղաքական համապատասխանեցում և տնտեսական ինստիտուցիոնալ համակարգի ձևավորում: Ե՛վ տեսական հիմնավորման, և՛ ինստիտուցիոնալ ձևավորման գործընթացներում առկա են

տնտեսական քաղաքականության արդյունավետության վրա ազդող մի շարք գործոններ:

Տեսական հիմնավորման արդյունավետության վրա ազդող գործոններ:

➢ *Տնտեսական համակարգի բարդություն*: Տնտեսական մոդելների, ռազմավարությունների և իրականացվող տնտեսական քաղաքականությունների անհաջողությունների պատճառներից մեկն այն է, որ տեսական հիմնավորումները մշակելիս տնտեսությունը չի դիտվում որպես կենդանի ու կենսունակ երևույթ, որն ունի կենսացիկլեր, զարգացման փուլեր, ինքնազարգացման ու ինքնակարգավորման օրենքներ, սիներգիկ կապեր ու փոխհարաբերություններ, համակարգեր համակարգերում, մակարդակներ մակարդակներում: Մենք պարզեցնում ենք տնտեսությունը, դիտում առանձին երևույթների պարզ, ուղիղ կամ հակադարձ կապերը՝ մոռանալով համակարգային, համալիրային, ժամանակային ու մակարդակային ամբողջության մեջ դրանց դիտարկումը: Տնտեսությունը բաժանում ենք մասերի՝ մոռանալով դրանք նոր են միավորել: Իսկ պազագույն համակարգերի լուծումներն, առանց ամբողջական, միասնական բարդ համակարգում դիտարկելու, առավել հավանականությամբ դատապարտված են ձախողման, կամ ավելին՝ հակառակ արդյունքի դրսևորման: Մասնագիտական գրականության մեջ այս երևույթը, երբ որոշակի հիմնախնդրի լուծման համար ընդունված որոշումները ոչ թե լուծում, այլ ուղղակիորեն հանգեցնում են նպատակների հակառակ արդյունքներին, հայտնի է «կոբրայի արդյունք» [2] անունով: Դժբախտաբար, նման օրինակները և պատմական փաստերը բազմակի են:

➢ *Տնտեսական լուծումների բազմակիություն, մոտեցումների իրարամերժություն*: Տնտեսական լուծումները ձևակերպվում են հիմք ընդունելով կա՛մ ավանդական տեսությունները, կա՛մ պատմական փորձի ընդհանրացումներն՝ էմուլյացիայի օրենքները, որոնք տնտեսական հիմնախնդիրներին առաջարկում են տարբեր, իսկ առավել հաճախ հակասական լուծումներ:

Ներկա կրթական դրվածքի և համընդհանուր քարոզչության պայմաններում ձևավորվում է համոզվածություն ավանդական աբստրակտ տեսությունների հրաշագործ հնարավորությունների նկատմամբ և տնտեսական քաղաքականության մշակման գործընթացում տրվում աներկբա նախապատվություն հենց այս տեսական հիմնավորումներին:

Միամտություն է հավատալ, որ ավանդական տեսությունները միակերպ ճիշտ են բոլոր երկրների համար և մշտապես: Այլընտրանքային լուծումներ առաջարկող պատմական փորձի ընդհանրացումները, տնտեսական զարգացման առանցքային սկզբունքներն, այսպես կոչված «էմուլյացիայի օրենքներ»-ը [3, 4], որոնցում հաշվի են առնված երկրների տիպային, գործառույթային, ժամանակային և բազմաթիվ այլ առանձահատկությունները, հաճախ ավելի արդյունավետ են ու կառուցողական:

Ըստ էության, տնտեսական քաղաքականության տեսական մշակման արդյունավետության հիմնախնդրում առկա են օբյեկտիվ և սուբյեկտիվ նախապատճառներ: Օբյեկտիվ, քանի որ տեսական հիմնավորումներում ու ընդհանրացումներում դեռևս անելիքներ շատ կան և դրանցում մասնագիտական միասնական կարծիք ձևավորված չէ: Սուբյեկտիվ, քանի որ շահագրգիռ աշխարհաքաղաքական առաջատար դերակատարները՝ համաշխարհային կառույցները, միջազգային կազմակերպություններն, ինտեգրացիոն միությունները ու հզոր երկրները, թերևս լավ գիտակ լինելով զարգացման առանցքային

սկզբունքներինը, սակայն, իրենց աշխարհատնտեսական ու աշխարհաքաղաքական ուժային գերիշխանությունը պահպանելու և կառավարման մեխանիզմներին տիրելու նկատառումներից ելնելով, նպատակայնորեն ապակողմնորոշում են հանրության և մասնագիտական լայն շրջանակներին, որպես անհերքելի ու համընդհանուր ճշմարտություններ ներկայացնելով իրենց շահեկան նախապայմանները: Իրականացվում է գրականության մեջ հայտնի «բնազդների բթացում» [3] գործընթացը: Վերջինիս կյանքի կոչման համար գործի են դրվում փափուկ կամ կոշտ՝ համոզման ու պարտադրման բազմաթիվ եղանակներ ու գործիքակազմ:

Այսպիսով, տնտեսական քաղաքականության տեսական ձևակերպումներն ու դրույթները կարող են չհամապատասխանել տվյալ երկրի տնտեսական զարգացման առաջնահերթություններին, լինել ոչ արդյունավետ կա՛մ թերի գիտելիքների, կա՛մ արտաքին ու ներքին շահագրգիռ ուժերի կողմից իրականացվող ճնշումների ու «բնազդների բթացման» գործընթացի արդյունքում:

***Տնտեսական ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման արդյունավետության վրա ազդող գործոններ*:**

➢ *Արտաքին աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահեր*: Ժամանակակից տնտեսության գլոբալ բնույթն անհնար է դարձնում ազգային տնտեսությունների տնտեսական քաղաքականության բացարձակ անկախությունը: Այն ձևավորվում է *վերազգային*, *տարածաշրջանային* և *բանակցային* (ad hoc երկկողմ կամ բազմակողմ) տնտեսական մեխանիզմների նշանակալի ազդեցության համատեքստում: Թելադրվող արտաքին խաղի կանոնները պաշտպանում են իրենց իսկ՝ կամ հեգեմոնների, կամ տարածաշրջանային ինտեգրացիոն միությունների, կամ էլ առանձին շահագրգիռ կողմերի շահերը: Որքան խոցելի է երկրի տնտեսական սուվերենությունն, այնքան մեծ է արտաքին գործոնի ազդեցությունը երկրի տնտեսական քաղաքականության ձևավորման գործընթացում, որոք շատ հաճախ հակասում են տնտեսական զարգացման ազգային շահերին:

➢ *Ներքին քաղաքական շահեր*: Քաղաքական էլիտան ձգտում է ձևավորել տնտեսական այնպիսի ինստիտուտներ, որոնք կպաշտպանեն իրենց շահերը, կնպաստեն սեփական դիրքերի ամրապնդմանը, այլ մրցակից ուժերի չձևավորմանը: Եվ եթե քաղաքական ինստիտուտներն էքստրակտիվ են՝ էլիտայի շահերը պաշտպանող, ինչպիսիք են զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներինն, ապա տնտեսական արդյունավետությունը զոհաբերվում է էլիտայի քաղաքական հաջողություններին: Եթե քաղաքական ինստիտուտներն ինկլյուզիվ են, ինչպիսիք են զարգացած երկրներինը, և որոնցում էլիտաները չունեն ինստիտուցիոնալ մենաշնորհ՝ այն բաշխված է տարբեր գերատեսչությունների միջև, ապա տնտեսական արդյունավետությունը գերակայող է:

➢ *Նպատակային հիպոթեզներ*: Տնտեսական քաղաքականության, տնտեսական ինստիտուտների ձևավորման վրա էական ազդեցություն են ունենում նաև նպատակային հիպոթեզները: Հիպոթեզային լուծումները, լինելով նպատակային, հաճախ կարող են համարժեք չլինել տնտեսական զարգացման առանցքային սկզբունքներին՝ դրանով իսկ բացասաբար անդրադառնալով տնտեսական արդյունավետության վրա: Նպատակային հիպոթեզներից ամենատարածվածներն են.

Ճյուղային ապահովագրության կամ ստատուս քվոյի պահպանման հիպոթեզ: Ենթադրվում է տնտեսական շոկերի նկատմամբ խոցելի տնտեսական գործունեության որոշ ճյուղերի աջակցություն: Ծառայում է շոկերի դեմ որպես «ապահովագրություն»: Ըստ այս հիպոթեզի պետական հավանական աջակցության են արժանանում այնպիսի ճյուղերը, որոնք առավել զգայուն են համաշխարհային գների անկման, նորագույն տեխնոլոգիական կամ ինքնատիպ առևտրային փորձի արտաքին մրցակցության նկատմամբ, քիչ հավանական աջակցության՝ առավել ապահովագրվածները [1]: Սակայն, նման մոտեցման դեպքում պետական հավանական աջակցության են արժանանում ոչ թե հովանավորչական անհրաժեշտություն ունեցող նորաստեղծ ռազմավարական ճյուղերն, ինչը տնտեսական արդյունավետության սկզբունքային տրամաբանությունն է պահանջում, այլ հաճախ արդեն իսկ կայացած ու ընդարձակ շուկաներ ունեցող ազդեցիկ ճյուղերը: Աջակցություն ցուցաբերելով տնտեսության ազդեցիկ այդ ոլորտներին՝ քաղաքական էլիտան միաժամանակ ապահովում է նաև ստատուս քվո, ձեռք բերում ադեցիկ աջակիցներ՝ դրանով իսկ ամրապնդելով իր քաղաքական դիրքերը: Ըստ էության, հիպոթեզն ակնկալում է նպատակային սուբյեկտիվ լուծում:

Բյուջետային եկամուտների մաքսիմիզացման հիպոթեզ [1]: Ենթադրվում է պետական բյուջե եկամուտների առավելագույն հոսքի ապահովում: Եկամուտների հոսքի ավելացում կարելի է ապահովել արտահանման և ներմուծման մաքսային հարկերի, գույքահարկի, եկամտահարկի, շահութահարկի, ինչպես նաև թաքնված հարկերի (ապրանքների գների բարձրացում, ինֆլյացիա) և այլ տուրքերի ավելացման հաշվին: Ըստ էության, նպատակային լուծում է:

Միջազգային բանակցությունների և պատասխան գործողությունների հիպոթեզ [1]: Ենթադրվում է ազգային տնտեսական քաղաքականության համաձայնեցումներ և կարգավորումներ՝ ի պատասխան պետության և միջազգային կառույցների միջև բազմասպեկտ տնտեսական ու քաղաքական փոխհամագործակցության շրջանակներում ձեռք բերված որոշումների: Ըստ էության, իրավիճակային լուծում է:

Գաղափարական նախապատվությունների հիպոթեզ [1]: Ենթադրվում է ղեկավարող կուսակցության, կամ նույնիսկ անհատի գաղափարախոսության որոշիչ ազդեցություն տնտեսական քաղաքականության ձևավորման գործընթացում: Ըստ էության, սուբյեկտային լուծում է:

Ինչպես տեսնում ենք հիպոթեզային լուծումները սուբյեկտային, իրավիճակային, նպատակային, հետևանքային լուծումներ են, որոնք կարող են էապես տարբերվել տնտեսական արդյունավետության ռազմավարական լուծումներից:

Այսպիսով, տնտեսական քաղաքականության տեսական հիմնավորումները, եթե նույնիսկ լինեն գիտականորեն անթերի հիմնավորված ու տնտեսական զարգացման երաշխավորված բաղադրատոմսեր, միևնույնն է դրանք կյանքի են կոչվում քաղաքական ինստիտուտների կողմից և վերաձևակերպվում ի շահ քաղաքական արդյունավետության: Եվ եթե քաղաքական ինստիտուտներն էքստրակտիվ են՝ էլիտայի շահերը պաշտպանող, իսկ քանի որ քաղաքական և տնտեսական ինստիտուտները միմյանց վերարտադրող են, ապա տնտեսական քաղաքականությունը և տնտեսական ինստիտուտները չեն կարող լինել այլակերպ. նրանք ևս էքստրակտիվ են: Ձևավորվում են

այսպես կոչված «ինստիտուցիոնալ թակարդներ» [1, 5], որոնք ըստ որոշ մասնագետների լրջագույն հիմնախնդիրներ են քաղաքական և տնտեսական ինստիտուտների բարեփոխումների և տնտեսական արդյունավետության համար, թեև կան նաև այլախոհ մոտեցումներ և նույնիսկ առաջարկում են դրանց բարեփոխման ոչ շոկային լուծումներ [1]:

Էքստրակտիվ ինստիտուտների պայմաններում առանձնապես կարևոր չէ իրականացվում է լիբերալ թե ակտիվ տնտեսական քաղաքականություն: Միևնույնն է, էքստրակտիվ ինստիտուտների պայմաններում տնտեսական արդյունավետությունը զոհաբերվում է մասնավոր հետաքրքրություններին:

***Տնտեսական քաղաքականության համակարգային գործակցության արդյունավետության հիմնախնդիրներ*:** Տնտեսական համակարգի, այդ թվում և տնտեսական քաղաքականության արդյունավետությունը, սերտորեն պայմանավորված է հասարակական համընդհանուր համակարգի ենթահամակարգերի արդյունավետություններից և ոչ պակաս կարևոր՝ նաև դրանց համագործակցությունից: Որքան էլ տնտեսական քաղաքականությունը լինի կառուցողական, ոչ բարենպաստ միջավայրում այն չի կարող արդյունավետ կյանքի կոչվել, իսկ առանց աջակցող ենթահամակարգերի համագործակցության չի կարող մոբիլիզացնել իր ներուժն ու զարգացման հնարավորությունները:

***Տնտեսական քաղաքականության իրականացման՝ կյանքի կոչման արդյունավետության վրա ազդող գործոններ*:** Սեփականության իրավունքի պաշտպանվածությունը, դատական համակարգի անաչառությունը, կոռուպցիայի և բյուրոկրատիայի, հանցագործության բացակայությունը, քաղաքական կայունությունը և վստահելիությունն՝ անհրաժեշտ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքներ են, առանց որոնց տնտեսական ինստիտուտները կամ արդյունավետ չեն գործում, կամ ընդհանրապես չեն գործում:

***Տնտեսական քաղաքականության և հասարակական մյուս ենթահամակարգերի համագործակցության արդյունավետության վրա ազդող գործոններ*:** Համընդհանուր միասնական համակարգի մյուս ենթահամակարգերի (ենթակառուցվածքներ, կրթություն, գիտություն, շրջակա միջավայրի պաշտպանություն և այլն) արդյունավետ զարգացումը, գործակցությունը և վերջիններիս համագործակցությունը՝ անհրաժեշտ նախադրյալներն են, որոնք ապահովում են տնտեսական քաղաքականության ներուժի, մրցակցային առավելությունների ստեղծում և կոորդինացում:

Այսպիսով, տնտեսական քաղաքականության և տնտեսության զարգացման արդյունավետությունը ոչ միայն բուն քաղաքականության արդյունավետության, այլ նաև վերջինիս կյանքի կոչման ու այլ ենթահամակարգերի հետ համահունչ համագործակցության արդյունավետության արդյունք է:

Մի կարևոր հանգամանք և.ս. կախված առաջնահերթություններից, նպատակներից և կիրառվող գործիքակազմից, տնտեսական քաղաքականության արդյունավետությունը կարող է լինել կարճաժամկետ կամ երկարաժամկետ:

Կարճաժամկետ արդյունավետությունն արտահայտվում է բավականին կարճ ժամանակահատված անց, սակայն արդյունքը չի ակնկալում երկարաժամկետ դրսևորում: Դրան հակառակ, տնտեսական քաղաքականության երկարաժամկետ արդյունավետությունն արտահայտվում է որոշակի ժամա-

նակ անց, սակայն գործունեության արդյունքը շարունակական է: Այս քաղաքականությունը ենթադրում է տնտեսության կայուն, արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծում, շուկայի բոլոր մասնակիցների համար հավասար հնարավորությունների ապահովում և հասարակության մեջ սոցիալական արդարության հաստատում:

Անվիճելիորեն, տնտեսական քաղաքականության երկարաժամկետ արդյունավետությունը կայուն ու կառուցողական տնտեսության հիմքն է:

Եզրակացություն: Երկրների ներուժը զարգացման գործընթացում կարևոր նախապայման է, սակայն բավարար հանգամանք չէ արդյունավետ զարգացման համար: Քիչ չեն երկրները, որոնք տիրապետելով հսկայական ներուժի, երկար տասնամյակներ դոփում են լճացման ճիրաններում և հակառակը, չունենալով ակնառու ներուժ, կերտում են տնտեսական զարգացման հրաշքներ: Պետական կառավարումը, մասնավորապես տնտեսական ռազմավարությունը և քաղաքականությունն այն որոշիչ գործոններն են, որոնց արդյունավետությունից կախված են տնտեսական հաջողումները կամ ձախողումները: Հոդվածի շրջանակներում ուսումնասիրելով տնտեսական քաղաքականության արդյունավետության հիմնախնդիրները պարզել ենք, որ. երկրների տնտեսական հաջողություններն արդյունք են տնտեսական քաղաքականության ձևավորման, վերջիններիս իրականացման ու նրա զարգացմանը նպաստող այլ ենթահամակարգերի համակարգային գործակցության արդյունավետությունների:

Տնտեսական քաղաքականության *ձևավորման* արդյունավետության վրա վրա ազդող գործոններն են՝ տեսական հիմնավորման փուլում՝ տնտեսական համակարգի բարդությունը, տնտեսական լուծումների բազմակիությունը, մոտեցումների իրարամերժությունը, ինստիտուցիոնալ համաձայեցման փուլում՝ արտաքին աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերը, ներքին քաղաքական շահերը, նպատակային հիպոթեզները:

Տնտեսական քաղաքականության *իրականացման* արդյունավետության վրա ազդող գործոններն են նաև սեփականության իրավունքի պաշտպանվածությունը, դատական համակարգի անաչառությունը, կոռուպցիայի, բյուրոկրատիայի և հանցագործության բացակայությունը, քաղաքական կայունությունը և վստահելիությունը:

Տնտեսական քաղաքականության և նրա զարգացմանը նպաստող այլ ենթահամակարգերի *համակարգային գործակցության* արդյունավետության վրա ազդող գործոններն են՝ ենթակառուցվածքների, կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության և այլ ենթահամակարգերի զարգացումն ու միմյանց հետ փոխհամագործակցությունը:

Տնտեսական քաղաքականության արդյունավետության հիմնախնդիրների պատճառների, ազդող գործոնների ուսումնասիրությունն ու պարզաբանումը հնարավորություն է տալիս իրավիճակային լուծումներից անցում կատարել ռազմավարական լուծումների, հետևանքային լուծումներից՝ պատճառային լուծումների և դրանով իսկ ապահովել տնտեսական զարգացման երկարաժամկետ կայուն արդյունավետություն:

Ստացվել է՝ 08.06.2021
Գրախոսվել է՝ 28.09.2021
Հաստատվել է՝ 16.12.2021

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Афонцев С.А. *Политические рынки и экономическая политика* (2-ое изд.). Москва, ЛЕНАНД (2015), 384 с.
2. Зиберт Х. *Эффект кобры*: *как избежать заблуждений в политике* (перевод с нем. под ред. П. И. Гребенникова). СПб, изд-во СПбГУЭФ (2003).
3. Reinert E.S. *How Rich Countries Got Rich… and Why Poor Countries Stay Poor*. London, Constable (2008), 398 p.
4. Ղամբարյան Գ.Գ. *ՀՀ տնտեսական զարգացման հիմնախնդիրները «Աճի բևեռներ և կենտրոններ» հայեցակարգի համատեքստում*: Երևան, ԵՊՀ հրատ. (2020), 270 էջ:
5. Аджемоглу Д., Робинсон Д.А. *Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты*. Москва, АСТ (2015).

Г. Г. ГАМБАРЯН

ПРОБЛЕМЫ ЭФФЕКТИВНОСТИ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ

Резюме

Успех или провал развития национальной экономики во многом зависит от эффективности экономической политики. Большинство стран мира фиксирует неудачи или, в лучшем случае, низкие темпы экономического развития. Возникает необходимость разъяснить, в чем причины провала экономической политики, каковы факторы, влияющие на ее эффективность. В статье выделяются и детализируются факторы, влияющие на эффективность экономической политики, ее реализации и синергии с другими подсистемами, а также связанные с ними проблемы.

По нашим наблюдениям, факторами, влияющими на эффективность разработки экономической политики, являются:

– на этапе теоретического обоснования: сложность экономической системы, множественность экономических решений, противоречие подходов;

– на этапе институционального согласования: внешние геополитические и гео-экономические интересы, внутриполитические интересы, целевые гипотезы.

В результате нехватки знаний, или давления со стороны внешних и внутренних заинтересованных сторон теоретическое обоснование экономической политики может не соответствовать приоритетам экономического развития страны и быть неэффективным. Даже если теоретически экономическая политика научно обоснована, она реализуется политическими институтами и перестраивается в пользу политической эффективности. В случае, если политические институты экстрактивны и защищают интересы элиты, то экономическая эффективность приносится в жертву частным интересам. Без улучшения бизнес-среды экономическая политика либо неэффективна, либо вообще не действует. Факторы, влияющие на эффективность реализации экономической политики: защита прав собственности, беспристрастность судебной власти, отсутствие коррупции, бюрократии, преступности, политическая стабильность и доверие.

Факторы, влияющие на эффективность системного взаимодействия (синергии) экономической политики с другими подсистемами, способствующими ее развитию: развитие инфраструктур, развитие образования и науки, охрана окружающей среды, другие подсистемы.

Не менее важным является взаимодействие этих подсистем друг с другом. Знание факторов, влияющих на эффективность экономической политики, дает нам возмож-ность перейти от ситуационных решений к стратегическим и обоснованным решениям и, тем самым, способствовать повышению эффективности экономической политики.

G. G. GHAMBARYAN

PROBLEMS OF ECONOMIC POLICY EFFECTIVENESS

Summary

The success or failure of national economy’s development depends on effectiveness of economic policy. However, many countries record failures or low rates of economic development. It becomes necessary to clarify the reasons for the failure of economic policy and the factors affecting its effectiveness. The article highlights the factors affecting economic policy’s effectiveness, its implementation and synergy with other subsystems. By our observations, the factors affecting the effectiveness of economic policy development are:

– at the stage of theoretical justification: the complexity of the economic system, the multiplicity of economic decisions, the contradiction of approaches;

– at the stage of institutional coordination: external geopolitical and geo-economic interests, internal political interests, target hypotheses.

As a result of a lack of knowledge or pressure from stakeholders the theoretical justification of economic policy may not correspond to priorities of country's economic development. Even if economic policy is scientifically substantiated, it’s implemented by political institutions and redesigned in favour of political efficiency. If political institutions are extractive and protect the interests of the elite, economic efficiency is sacrificed to private interests.

Factors affecting the effectiveness of the implementation of economic policy: protection of property rights, impartiality of the judiciary, lack of corruption, bureaucracy, crime, political stability. Without improving the business environment, economic policy is either ineffective or does not work at all.

Factors affecting the effectiveness of systemic interaction (synergy) of economic policy with other subsystems that contributes to its development: development of infrastructures, education and science, environmental protection, etc. No less important is the interactions of these subsystems.

Knowledge of the factors affecting the effectiveness of economic policy enables us to move from situational decisions to strategic and well-grounded decisions and, thereby, contribute to increasing the effectiveness of economic policy.